

**ԿՐՈՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Բանալի քառեր՝ Չինաստան, ճանաչված կրոններ, Ժողովրդական հավատալիքներ, կրոնական հարցախույզ, կրոնների չինականացում, հավատք, պաշտամունքային վայր

Յուրաքանչյուր երկրի զարգացման և առաջխաղացման գրավականներից մեկը կրոնաքաղաքական միասնության ու կայունության ապահովումն է: Չինաստանի Ժողովրդական Հանրապետության էթնիկական պատկերն իրենից ներկայացնում է 56 ազգային փոքրամասնությունների ամբողջություն, որոնց կրոնամշակութային միասնության, ազգային գաղափարախոսության առկայության, համատեղ ապրելու և կենսագործելու դեպքում միայն հնարավոր է Չինաստանի՝ որպես հզոր պետության զոյությունը: Անդրադառնալով Չինաստանի վարած կրոնական քաղաքականությանը անպայման պետք է հաշվի առնել մի քանի պատմական փուլեր՝ մինչև 1949 թվականը՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հռչակումը, 1949 թ.-ից 1976 թվականներ՝ «մշակութային հեղափոխության» սկիզբ և ավարտ և 1978-ից մինչ այսօր: Յուրաքանչյուր փուլին համապատասխան կրոնական իրավիճակը Չինաստանում եղել է շատ տարբեր:

Սույն հոդվածում քննվել է կրոնական իրավիճակը ժամանակակից Չինաստանում, Չինաստանի կառավարության դիրքորոշումը կրոնների նկատմամբ, ինչպես նաև կատարվել է կրոն դավանողների ընդհանուր քանակի վերլուծություն: Գաղտնիք չէ, որ հայ հասարակության մեջ լայն տարածում է գտել այն միտքը կամ պատկերացումը, որ Չինաստանը աթեիստական երկիր է, իսկ չինացիները՝ աթեիստներ: Հայ գիտական մտքում ևս անհրաժեշտ չափով ուսումնասիրություններ չեն կատարվել պարզելու համար, թե որքանով են իրավացի նման պնդումները: Սույն հոդվածում նաև պատասխան կտրվի նշված հարցերին՝ ցույց տալով, որ թեև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կոմունիստական կուսակցությունը աթեիստական է, բայց կրոնների և կրոնական կազմակերպությունների գործունեությունն արգելված չէ երկրում:

¹ Չինաստանի Նանձինի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ասպիրանտ, է. փոստ՝ annaarm4@mail.ru

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (այսուհետ՝ ՉԺՀ) կրոնական իրավիճակին անդրադառնալիս և՛ հայ, և՛ միջազգային հասարակության լայն շրջանակներում տիրում է այն կարծիքը, որ չինացիները չեն դավանում որևէ կրոնական ուսմունք, սոցիալիստական կարգերին համապատասխան երկրում հռչակված է աթեիզմը: Այս պատկերացումը գալիս է Չինաստանում Մաո Ծը Դոնի կողմից հռչակված մշակութային հեղափոխության (1966-1976 թթ.) պատճառով, որի ամբողջ ընթացքում կրոնը իր բոլոր դրսևորումներով ճանաչվել էր վտանգավոր երևույթ, որի դեմ պետք է պայքարել, իսկ երկրում հռչակվել էր աթեիզմ: Այնուամենայնիվ ներկա ժամանակաշրջանում հավատքի և կրոնի հարցերը Չինաստանում այնքան էլ պարզ ու բացահայտված թեմա չեն: Չինաստանի կոմունիստական կուսակցությունը պաշտոնապես աթեիստական է, որի անդամները չեն դավանում որևէ կրոնական ուսմունք, սակայն դա չի տարածվում ՉԺՀ քաղաքացիների վրա: Այն հարցը, թե որքան մարդ է Չինաստանում, առանց ներառելու Հոնկոնգը, Թայվանը և Մակաոն, դավանում կամ հավատում որևէ կրոնական ուսմունքի, մինչ այժմ ուսումնասիրությունների առարկա է հանդիսանում բազմաթիվ գիտնականների և հետազոտողների համար: Չինաստանի պատմության մեջ բացակայել է կրոն կոչվող ընդհանուր հասկացությունը՝ բնութագրելու համար աստվածների, ոգիների նկատմամբ հավատքը ու պաշտամունքը: Կրոն (չինարեն «ծոն ծիաո» 宗教) բառը, չինարեն է թարգմանվել միայն 19-րդ դարում²: Իր հերթին «ծոն ծիաո» բառն օգտագործվում է միայն պաշտոնապես ճանաչված հինգ կրոնների համար, այլ կրոնական հավատալիքների, շամանական ավանդույթների համար, չինացի գիտնականները սկսել են օգտագործել այլ տերմիններ, այսպես օրինակ «ժողովրդական հավատք» (folk faith-Մին Ծիեն Սին Յան-民間信仰), «ժողովրդական կրոն» (folk religion-մին ծիեն ծոն ծիաո-民間宗教) կամ ուղղակի «Չինական կրոններ» (Ճոն Խուա Ծիաո-中華教) և նմանատիպ այլ հասկացություններ:

ՉԺՀ-ում քաղաքացու կրոնի և խղճի ազատությունը նախ և առաջ ամրագրված է երկրի Սահմանադրությունում: Այնտեղ նշվում է, որ Չինաստանը սոցիալիստական պետություն է, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Սահմանադրության 36-րդ հոդվածը

² Ծոն Ծիաո-宗教 (religion) բառը, որ օգտագործվում է կրոն իմաստով, չինարեն թարգմանաբար նշանակում է «նախնիների ուսմունք»: Այս բառը օգտագործվել է դեռ շատ վաղ ժամանակներում բուդդայական տեքստերում և վերաբերել է բուդդայական ուսմունքին ընդհանրապես, սե՛ս Xingzhong Yao & Yanxia Zhao, Chinese Religion, A Contextual Approach, Continuum International Publishing Group, London; New York, 2010, p. 27.

սահմանում է քաղաքացու խղճի և հավատքի ազատությունը, համաձայն որի քաղաքացու հավատքի ազատությունը քաղաքական կամ հասարակական օրգանների կողմից չի կարող ենթարկվել որևէ բռնության: Բացի այդ, արգելվում է իրականացնել որևէ կրոնական խտրականություն: Պետությունը պահպանում է կրոնական գործունեության անխափան և նորմալ իրականացումը, սակայն դրանով հանդերձ արգելվում է օգտագործել կրոնը՝ խախտելու հասարակական կարգը, վնաս հասցնելու քաղաքացիների առողջությանը, ինչպես նաև պետական կրթական համակարգին: Նույն կետով սահմանվում է, որ կրոնական կազմակերպությունները և կրոնական գործերը որևէ կերպ չեն կարող ենթարկվել արտաքին ուժերի ազդեցությանը³:

Կրոնի մասին դրույթները ամրագրված են նաև «Սպիտակ գիրք» կոչվող պետական փաստաթղթի «Չինաստանում կրոնական ազատության ապահովման քաղաքականություն և պրակտիկա» բաժնում⁴: Այնտեղ հստակ նշված է, որ արգելվում է **ծայրահեղականության բոլոր դրսևորումները, արտաքին ուժերի որևէ միջամտություն Չինաստանի ներքին գործերին՝ կրոնական պատրվակով, անօրինական կրոնական ցանկացած գործունեություն** (ընդգծումը իմն է՝ Ա.Ա): Հատկապես շեշտվում է կրոնական կազմակերպությունների անկախ լինելու և այլ երկրների ազդեցությանը չենթարկվելու հանգամանքը⁵:

Ըստ «Սպիտակ գրքի»՝ կրոնական որևէ ուղղություն գերակայություն չունի մյուսի նկատմամբ (ինչը ցույց է տալիս, որ կառավարությունը բոլոր կրոններին վերաբերում է հավասար), կրոնին վերաբերվող հարցերը կարգավորվում են օրենքով: «Սպիտակ գրքում» մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն հատվածը, որտեղ հայտարարվում է, որ կրոնը պետք է համապատասխանեցվի սոցիալիստական հասարակության նորմերին, որն էլ իր հերթին իրենից ենթադրում է հետևյալ քայլերի կատարումը. սովորեցնել հավատացյալ քաղաքացիներին ջերմորեն սիրել հայրենիքը և ազգը, պահպանել երկրի միասնությունը, ենթարկվել և ծառայել պետության և ազգի բարձրագույն շահերին, ճիշտ կերպով ուղղորդել կրոնական շրջանակներին, որպեսզի նրանք պաշտպանեն ՉԺՀ-ը և

³ Конституция Китайской Народной Республики, <https://legalns.com/download/books/cons/china.pdf>.

⁴ «Չինաստանում կրոնական ազատության ապահովման քաղաքականություն և պրակտիկա» փաստաթղթի տեքստը <https://www.fmprc.gov.cn/rus/ziliao/zt/zfbps/t25320.shtml>

⁵ <https://www.fmprc.gov.cn/rus/ziliao/zt/zfbps/t25320.shtml>

սոցիալիստական կարգը, հաստատուն զնան չինական տարրերով սոցիալիզմի ուղղով, **շարունակեն կրոնների չինականացումը** (ընդգծումը իմն է՝ Ա.Ա.), տարածեն Չինաստանի ավանդական մշակութային արժեքները և այլն:

Չինաստանը բավականին խիստ հետևում է արտաքին միջամտության կանխմանը իր երկրի ներքին հարցերին: Բացառություն չի կազմում նաև կրոնական հարցերում: Կրոնի հարցերով զբաղվում է կառավարությանը ենթարկվող կրոնական վարչությունը, որտեղ և պետք է գրանցվեն բոլոր կրոնական կազմակերպությունները: Չգրանցված և ընդհատակում գործող կրոնական բոլոր կազմակերպությունների նկատմամբ Չինաստանի կառավարությունը մղում է դրանց բացահայտման և վերացման համառ պայքար, որի համար էլ 2000 թ. նոյեմբերին ստեղծվել էր «Չինաստանի հակաադանդավորական ասոցացիա»-ն (中国反邪教协会)⁶: Կրոնական կազմակերպությունների գրանցման (宗教活动场所设立审批和登记办法, հրապարակվել է՝ 21.04.2005), կրոնական ուսումնական հաստատությունների հիմնադրման (宗教院校设立办法, հրապ. 01.08.2007), կրոնական սպասավորների նշանակման (宗教教职人员备案办法, հրապ. 29.12.2006) և ցանկացած կրոնական այլ հարցերի վերաբերյալ Չինաստանի կառավարությունը հրապարակել է օրենքներ և փաստաթղթեր, որոնցով և կարգավորվում է այդ ամբողջ գործընթացը:

Արտաքին ցանկացած ուժի միջամտության կանխարգելման լավագույն օրինակը հանդիսանում է Վատիկանի և Չինաստանի միջև հաստատված հարաբերությունները: Նրանց միջև հարաբերությունները լարված են եղել բավականին երկար ժամանակ, քանի որ Չինաստանը իր կաթոլիկ եպիսկոպոսների վավերացումը Վատիկանի կողմից դիտարկում էր որպես արտաքին ուժերի միջամտություն իր ներքին գործերին: Իհարկե այս լարվածությունը պայմանավորված էր նաև նրանով, որ Վատիկանը այն քիչ երկրներից մեկն էր, ով ճանաչել էր Թայվանի անկախությունը ու շարունակում է նրա հետ պահպանել դիվանագիտական հարաբերություններ: Այս լարվածությունը մեղմանում է միայն 2018 թ.ին, երբ ՉԺՀ-ի և Վատիկանի միջև կնքվեց համաձայնագիր՝ փոխհամաձայնեցված կերպով եպիսկոպոսներ նշանակելու վերաբերյալ⁷:

⁶ «Չինաստանի հակաադանդավորական ասոցացիա»-ի վեբկայք՝ <http://www.chinafxj.cn/>

⁷ Ըստ համաձայնագրի՝ Վատիկանը իրավունք է ստանում եպիսկոպոսներ օծելու Չինաստանի կաթոլիկ համայնքի համար, և փոխարենը վավերացնում է այն յոթ եպիսկոպոսների ձեռնադրությունը, որը կատարվել էր առանց Վատիկանի օժման և

Այսպիսով՝ ապահովելով իր քաղաքացիների և նաև օտարերկրացիների հավատքի ազատության իրավունքը՝ Չինաստանի կառավարությունը սահմանում է նաև այն դրույթները, որոնց իրականացման դեպքում միայն ապահովվում է այդ ազատությունը: Ըստ այդմ՝ ցանկացած կրոնական դրսևորում, որը սպառնալու է հասարակական կարգի խախտմանը՝ պետության կողմից խստիվ պատժվելու է: Այս ամենով հանդերձ պատահական չէ Չինաստանի կառավարության կրոնական կազմակերպությունների նկատմամբ զգուշավոր քաղաքականությունը: Չինաստանը՝ լինելով բազմէթնիկ երկիր, կրոնների առումով ևս խայտաբղետ երկիր, միանշանակորեն ունի բոլոր «իրավունքները» և միջոցները «պաշտպանելու» իր քաղաքացիներին և իր երկիրը կրոնի հենքի վրա առաջացած ցանկացած ընդվզումներից: Չինաստանի կառավարությունը նաև անթաքույց հայտարարում է, որ Չինաստանում կրոնական կազմակերպությունների գործունեությունը միանշանակ կերպով պետք է ուղղորդված լինի ազգի և պետության շահերին, գործի միայն այդ դիրքերից և ամենակարևորը՝ սոցիալիզմը և կրոնները պետք է գործեն փոխհամաձայնեցված:

Չինաստանի կառավարությունը տարբերակում է դնում ճանաչված կրոնների և չճանաչված կրոնների միջև, որոնք համատասխանաբար տարբեր կերպ են գնահատվում պետության կողմից: ՉԺՀ կառավարության կողմից պաշտոնապես ճանաչված կրոնները հինգն են՝ դաոսականություն, բուդդիզմ, իսլամ, կաթոլիկություն և բողոքականություն: «Ճանաչված կրոններն» իրենց ներկայացուցչություններն ունեն կառավարության առընթեր գործող կրոնական տեսչություններում՝ տարբեր միավորված կազմակերպությունների և ասոցացիաների միջոցով: Ներկայումս Չինաստանում գործում են հետևյալ կրոնական ասոցացիաները՝ Չինաստանի բուդդայական՝ հիմնադրված (1953 թ.), դաոսական (1957 թ.), իսլամական (1953 թ.), Չինաստանի կաթոլիկների «մեկ ասոցացիա և մեկ կոնֆերանս» (中国天主教一会一团, 1957 թ.), Չինաստանի Եռամիասնություն բողոքական եկեղեցի (中国基督教两会, 1954 թ.) և

ճանաչվել էր ամօրինական, տե՛ս <https://www.theguardian.com/world/2018/sep/22/vatican-pope-francis-agreement-with-china-nominating-bishops>: Համաձայնագիրը նորացվում է կողմերի կողմից 2020 թ.ի հոկտեմբեր ամսին՝ երկու տարի ժամանակով, մինչև 2022 թ.ի հոկտեմբերի 22-ը, <https://www.vaticannews.va/en/vatican-city/news/2020-10/holy-see-china-provisional-agreement-renew-appointment-bishops.html>

Չինաստանի քրիստոնեական ասոցիացիաները (1980 թ.)⁸: Ըստ տարբեր հետազոտողների հնչեցված կարծիքների, տվյալ ասոցիացիաները ստեղծվել են Չինաստանի կառավարության կողմից՝ կառավարելու և հետևելու համար կրոնական համայնքների գործունեությունը՝ բացառելու համար որևէ հակասոցիալիստական, հակակառավարական գործունեություն, բավականին նման այն «տեղական և կենտրոնական գործակալություններին, որոնք ստեղծվել էին կայսերական Չինաստանի կողմից՝ բուդդայականների և դաոսականների վերահսկողության համար»⁹:

Պետք է արձանագրենք, որ Չինաստանում չկա քրիստոնեությունը որպես մեկ միասնական կրոնական համակարգ, այն Չինաստանում ներկայացված է իր երկու ճյուղերով՝ կաթոլիկությամբ և բողոքականությամբ:

Ըստ պաշտոնական-պետական տվյալների՝ Չինաստանում հավատացյալ¹⁰ բնակչության թիվը ընդհանուր առմամբ հասնում է 100 միլիոնի (որը կազմում է բնակչության 10%-ը), որից 6 մլն կաթոլիկներ են, 38 մլն բողոքականներ, 20 մլն մուսուլմաններ, բուդդայականների և դաոսականների քանակը չի նշվում, չի նշվում նաև ժողովրդական հավատալիքների հետևորդների քանակը¹¹:

Բացի պաշտոնական մակարդակի հրապարակումներից՝ պարզելու համար, թե որքան մարդ է Չինաստանում դավանում որևէ կրոն, տարբեր հետազոտական հաստատություններ իրականացրել են հետազոտություններ, օրինակ՝ 2007 թվականին Արևելյան Չինական մանկավարժական համալսարանի (华东师范大学) կատարած հետազոտության համաձայն, Չինաստանում հավատացյալների թիվն անցնում է 100 միլիոնը, այն կազմում է բնակչության մոտավոր 31.4 %-ը, տարիքային շեմը՝ 16 տարեկանից բարձր¹²:

⁸ Wenzel-Teuber K., “People’s Republic of China: Religions and Churches Statistical Overview 2011”, Religions & Christianity in Today’s China, Vol. II, 2012, No. 3, pp. 29-54, p. 33.

⁹ Yang, C.K., Religion in Chinese Society: A Study of Contemporary Social Functions of Religion and Some of Their Historical Factors, Berkeley and Los Angeles, University of California Press, 1967, pp. 180–217, p. 393–4.


¹⁰ Այստեղ և հոդվածի մյուս տեղերում «հավատացյալ» ասելով նկատի ունենք ՉԺՀ-ում ընդունված հինգ կրոնների հետևորդներին:

¹¹ Նշվում է միայն 40 հազար դաոսական և 222 հազար բուդդայական վանականների կամ տաճարներում ծառայություն իրականացողների մասին, http://russian.news.cn/2018-05/25/c_137206040.htm

¹² Հարցմանը մասնակցել են 4500 մարդ, որոնց հաշվով էլ կազմվել է վերջնական ամփոփիչ արդյունքները, տե՛ս Sun Yiwei (孙奕玮) 当代中国人宗教信仰调查 (Investigation into the Religious Belief of Today’s Chinese) [in: Liaowang dongfang zhoukan 瞭望东方周刊, 2007, Feb. 8., pp. 28-33], <https://view.news.qq.com/a/20121216/000004.htm>

Մեկ այլ «Չինական հոգևոր կյանք» հարցախույզի (CSLS, 2010) ուսումնասիրության համաձայն Չինաստանում իրական աթեիստների թիվը կազմում է միայն 15%, իսկ բնակչության 85%-ը որևէ կրոնական ուղղության հետևորդ է և կամ իրականացնում է որևէ կրոնական գործողություն (խունկ-մոմ վառել, եկեղեցի-տաճար այցելություն, աղոթք)¹³:

2010 թ. Չինաստանի Սոցիալական գիտությունների ակադեմիայի (中国社会科学院, Chinese Academy of Social Sciences, CASS) կողմից հրատարակվել է «Կրոնների կապույտ գիրք» (Zongjiao lanpi shu 宗教蓝皮书) աշխատությունը, որն ավելի համապարփակ և ընդհանուր է ներկայացնում Չինաստանի կրոնական պատկերը (տես աղյուսակ 1):
Աղյուսակ 1.



Ըստ դրա՝ Չինաստանի հավատացյալ բնակչության թիվն անցնում է 267 մլն-ը. բուդդայականության հետևորդները կազմում են մեծամասնություն՝ 205 միլիոն, կաթոլիկներ՝ 6 մլն, որոշ աղբյուրներում՝ մինչև 12 մլն, մուսուլմաններ՝ 23 մլն, բողոքականներ՝ 23.05 մլն, որոշ աղբյուրներում մինչև 40 մլն, դաոսականներ՝ 12 միլիոն¹⁴:

Այնուամենայնիվ կրոնագետների և հետազոտողների կարծիքով տարբեր հարցախույզների տվյալները չեն կարող լիովին արտահայտել իրականությունը, քանի որ ելնելով որոշակի մտահոգություններից, չինացիները ոչ միշտ են բացահայտ ներկայացնում իրենց կրոնական պատկանելիությունը, հատկապես քրիստոնյա լինելու պարագայում¹⁵:

¹³ CSLS [Chinese Spiritual Life Survey]: Fenggang Yang with Anning Hu – Fan Jiang – R.J. Leamaster – Jun Lu – Zhenyu Tang (Center on Religion and Chinese Society, Purdue University), “Quantifying Religions in China,” 5 page manuscript of a presentation at the Seventh Annual Conference for the Social Scientific Study of Religion in China, Beijing, July 26–27, 2010.

¹⁴ 中国宗教报告 (2015) / 邱永辉主编—北京：社会科学文献出版社， 2016./ANNUAL REPORT ON RELIGIONS IN CHINA (2015), ed. Qiu Yonghui, Social Sciences Academic press, Beijing, 2016.

¹⁵ Gao Shining (高师宁) “The Self-Identity of Chinese Christians” (English/Chinese), in: Chinese Cross Currents, 2011, No. 3, pp. 126-130, pp. 126 and 130.

Չպետք է նաև անտեսել այն հանգամանքը, որ Չինաստանի բնակչության ոչ քիչ հատված, հատկապես գյուղական բնակավայրերում, պահպանել և շարունակում է կիրառել տարբեր ոգիների, ուժերի, նախնիների պաշտամունքի նկատմամբ հավատքը և ծեսերը: Իսկ շատ հարցախույզներ չեն անդրադառնում ժողովրդական հավատալիքների հարցին: «Կապույտ գրքի» մեջ մեկ հոդված վերաբերում է ժողովրդական հավատալիքներին (մին ծիեն սին յան 民间信, Folk Religions), սակայն որևէ կերպ ներկայացված չէ թվային հարաբերակցությունը: Այս հարցի պատասխանը տալիս է «Չինական հոգևոր կյանք» (CSLS) հարցախույզը, ըստ որի մոտավոր 141 միլիոն մարդ հավատում է հարստության աստծո գոյությանը (ցայ շըն 财神), 119 միլիոն մարդ ունի հարստության աստծու պատկերը իրենց տանը կամ աշխատավայրում, 362 միլիոնը՝ վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել է որևէ ոգեկան գործողությունների (դեմքի գուշակություն, բախտագուշակություն և այլն), 215 միլիոնը հավատում է նախնիների ոգիների գոյությանը, իսկ 754 միլիոնը իրականացրել է որոշակի նախնիների պաշտամունքի տարրեր¹⁶: Ընդ որում հարցվածները հանդիսացել են նաև ճանաչված հինգ կրոններից որևէ մեկի հետևորդ:

Չինաստանում առանձին ուսումնասիրությունների առարկա են դարձել նաև պաշտամունքի վայրերը: Ադյուսակ 2-ում ներկայացված է պաշտամունքային վայրերի թվաքանակը՝ ըստ Չինաստանի կառավարության հայտարարության: Մեկ այլ՝ «Չինաստանի կրոնական հարցախույզ» (China Religion Survey, CRS) ծրագրի շրջանակներում մոտ երկու տարվա (2013-2015 թթ.) ընթացքում քննվել են Չինաստանի 31 քաղաքների 4383 կրոնական պաշտամունքի վայրեր: Հետազոտությունը մանրամասն ներկայացնում է այդ վայրերի ստեղծման պատմությունը, ժամանակարշջանը և զարգացման տեմպերը: Պարզվում է, որ քրիստոնեական պաշտամունքի վայրերի թիվը կազմում է բացարձակ մեծամասնություն, ընդ որում դրանց միայն 1/5-ն է կառուցվել մինչև 1949 թ., ի տարբերություն մյուս կրոնական ուղղությունների, որոնց պաշտամունքային վայրերի մեծ մասը կառուցվել են մինչև 1949 թվականը (Տես պատկեր 3)¹⁷: Համեմատելով այս և «Սպիտակ գրքի» տվյալները պաշտամունքի վայրերի մասին, ակնհայտ է մի փաստ՝ քրիստոնեական պաշտամունքի վայրերը (կաթոլիկություն և բողոքականություն միասին) բացարձակ

¹⁶ CSLS [Chinese Spiritual Life Survey]: Fenggang Yang with Anning Hu – Fan Jiang – R.J. Leamaster – Jun Lu – Zhenyu Tang.


¹⁷ 中国宗教报告 (2015) /ANNUAL REPORT ON RELIGIONS IN CHINA (2015), p. 315, 316.

մեծամասնություն են կազմում դավանորդների թվով առաջին համարվող բուդդայական տաճարների նկատմամբ, սակայն զիջում են մուսուլմանական պաշտամունքային վայրերին:

Աղյուսակ 2

85 հազար տաճար և կրոնական պաշտամունքի այլ վայրեր	
մզկիթ	30 հազար
բուդդայական տաճար և մենաստան	13 հազար
բողոքական եկեղեցի	12 հազար
կաթոլիկական եկեղեցի	4.6 հազար
դառասական վանքեր	1.5 հազար

Աղյուսակ 3. Տվյալները ներկայացված են ըստ Չինական կրոնական հարցախույզի



Ամփոփելով պարզ է դառնում, որ պաշտոնական տվյալներով Չինաստանում կա ավելի քան 100 մլն հավատացյալ, ոչ պաշտոնական, ըստ տարբեր հարցախույզների՝ հավատացյալ բնակչության թիվը հասնում է 300 միլիոնի, իսկ որոշ տվյալների համաձայն՝ Չինաստանի բնակչության 80 տոկոսից ավելին հավատում է որևէ կրոնի: Պաշտոնական և ոչ պաշտոնական տվյալների համադրումից պարզ դարձավ, որ բուդդայական կրոնի հետևորդները կազմում են ՉԺՀ բնակչության բացարձակ մեծամասնություն, որին հաջորդում են քրիստոնյաները, ապա մուսուլմանները, նոր միայն վերջում դառսիզմի հետևորդները:

Չինացիները լինելով աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկը, ունենալով հարուստ պատմություն և մշակույթ, ամենավաղ շրջաններից սկսած ունեցել են կրոնական տարբեր հավատալիքներ: Սկսած վիշապների, նախնիների պաշտամունքից մինչև

դատասկանություն, կոնֆուցիոսականություն, իսլամ, քրիստոնեություն, պատմության տարբեր փուլերում նախապատվությունը տրվել է որևէ առանձին կրոնական ուղղության, սակայն և հնարավոր չի եղել արմատախիլ անել այլ կրոնների դավանանքը: Նույնիսկ սոցիալիստական կարգերի հաստատումից և երկրում աթեիզմ հռչակելուց հետո չինական հասարակության մեջ հնարավոր չեղավ վերացնել ոչ միայն «ճանաչված» կրոնական ուղղությունների նկատմամբ հավատքը, այլև նախնիների, ոգիների և այլ ժողովրդական հավատալիքների նկատմամբ հավատքը: 21-րդ դարում ևս Չինաստանում կրոնական իրավիճակն իրենից ներկայացնում է խայտաբղետ մի պատկեր, որտեղ կրոնները գործում են համաչափությամբ՝ Չինաստանի կառավարության գծած ուղղով: Չինաստանի կառավարությունը սոցիալիստական կարգերի չինական ոգուն համապատասխան վարում է «կրոնների չինականացում», որի համաձայն կրոնները ոչ թե պետք է անջատողական քաղաքականություն վարեն, այլ ծառայեն պետության և ազգի միասնությանը ու ամրապնդմանը: Իսկ դրան հասնելու համար մշակվել և գործածության մեջ են դրվել տարբեր համաձայնագրեր և օրենքներ, որոնցով ապահովվում է ՉԺՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների խղճի և կրոնական ազատության իրավունքը: Չինաստանի կառավարությունը ճանաչել և թույլատրելի է համարել հինգ կրոնների (բուդդայականություն, բողոքականություն, կաթոլիկություն, իսլամ, դատասկանություն) դավանանքը, որը սակայն չի ենթադրում այլ հավատալիքների ոչնչացում, որոնք սակայն իր հերթին ընդունելի չեն ՉԺՀ կառավարության համար: Ուստիև, հայ իրականության մեջ այն համոզումը կամ անտեղյակությունը, թե չինացիները աթեիստներ են և չեն դավանում որևէ կրոն, չի արտացոլում իրականությունը և դասվում է Չինաստանին վերագրվող հերթական «միֆերի» շարքը:

RELIGIOUS STATUS IN THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA

Anna Adamyan

(Summary)

The Constitution of the People's Republic of China proclaims the freedom of religion and conscience of its citizens, which, however, is limited to the extent permitted by the interests and the security of the country. In China, there are five state-recognized religions whose rights and responsibilities are defined by law. Religious policy of the People's Republic of China based on

the “chineseization of religions”, on the unity of the nation and the country, which excludes any significant influence or interference from outside into religious affairs.

Studies conducted by various institutions at different times have revealed that there are more than 200 million believers in China. However this number does not include those who believe in different spirits, ancestors’ spirits, or folk religions.

РЕЛИГИОЗНАЯ СИТУАЦИЯ В КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКЕ

Анна Адамян

(Резюме)

Конституция Китайской Народной Республики провозглашает свободу религии и совести ее граждан, которая, однако, ограничена в той мере, в какой это позволяют интересы и безопасность страны. В Китае есть пять признанных государством религий, права и обязанности которых определены законом. Религиозная политика Китайской Народной Республики основана на необходимости “китайзации религий” и на обеспечение единство народа и государства, для которого исключается любое влияние или вмешательство внешних сил во внутренние дела страны, включая в религиозных вопросах.

Исследования, проведенные различными учреждениями в разное время, показали, что в Китае более 200 миллионов верующих, не считая тех, кто верит в разных духов, предков или людей разных верований.